ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրած՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը 2017 թվականի մայիսի 4-ին «Վոլիոս» փակ բաժնետիրական ընկերության հետ առանց մրցույթի անցկացման կնքել է «0,4-6 (10) 35 կՎ և բարձր ցանցի նախագծման, շենքերի և շինությունների վերանորոգման, կապիտալ շինարարության, տեխնիկական վերազինման և վերակառուցման համար նախագծողի ծառայությունների մատուցման աշխատանքներ» ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Գործարք), ինչը կարող է համարվել Հանձնաժողովի սահմանած՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների (սահմանված՝ Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա, ապա՝ 2020 թվականի օգոստոսի 13-ի №273Ա որոշումներով) հնարավոր խախտում: Նշված փաստի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովը 2022 թվականի ապրիլի 26-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 26-ի №ԳԲ/34.3-Մ4-3/1301-2022 գրությամբ,

2) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի մայիսի 6-ի №Ե-317-22 գրությամբ հայտնել է, որ նախագծային աշխատանքները Հայաստանի Հանրապետությունում համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպություններին պատվիրելիս առաջանում էին տարաբնույթ խնդիրներ, մասնավորապես՝ նախագծային աշխատանքների իրականացման ժամկետների խախտումներ, ինչը հանգեցնում էր նոր բաժանորդների սպառման համակարգերը ցանցին միացման աշխատանքների համար սահմանված ժամկետների խախտման, ինչպես նաև տարբեր ընկերությունների կողմից կազմված նախագծերում օգտագործված միևնույն նյութը ունենում էր տարբեր անվանումներ, ինչն էլ հանգեցնում էր օգտագործվող նյութերի նույնականացման դժվարությունների և ներդրումային գործունեության պլանավորման ու դրա ապահովման համար գնման գործընթացների ուշացման: Հարկ է նշել, որ ներկայումս, հաշվի առնելով նախագծման ծառայությունների մատուցման շուկայում հնարավոր նոր ընկերությունների ներգրավվման և համապատասխանաբար նոր առաջարկների առկայության հնարավորությունը, Ընկերությունը հայտարարել է նոր մրցույթ՝ «0,4-6 (10) 35 կՎ և բարձր լարման ցանցի նախագծման, շենքերի և շինությունների վերանորոգման, կապիտալ շինարարության, տեխնիկական վերազինման և վերակառուցման» նախագծողի ծառայությունների մատուցման աշխատանքները ձեռք բերելու համար, իսկ Ընկերությունը 2022 թվականի հունիսի 8-ի №Ե-418-22 գրությամբ հայտնել է, որ մայիսի 26-ին կայացել է Ընկերության կարիքների համար գլխավոր նախագծողի գործառույթների իրականացման» ծառայությունների մատուցման նոր մրցույթ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Վոլիոս նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը, և վերջինիս հետ կնքվել է A-286/22 պայմանագիրը,

3) Գործարքի կնքման պահին գործող՝ Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների 7-րդ կետի համաձայն՝ անկախ որևէ հանգամանքից, մինչև գնումների իրականացումը հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ և յուրաքանչյուր դեպքի համար հիմնավորեն

գնումների ընթացակարգի ընտրությունը: Գնումների կատարման նախընտրելի ընթացակարգերը պետք է ապահովեն մրցակցությունը գնումների իրականացման ընթացքում: Գնումները կարող են կատարվել նաև մեկ անձից՝ բանակցությունների միջոցով, հետևյալ դեպքերում՝

- ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, հրատապությունից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է՝ պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել.
- անհրաժեշտ է իրականացնել տարածքի վարձակալության կամ օգտագործման, էլեկտրական էներգիայի, բնական գազի, խմելու ջրի մատակարարման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների գնում, իսկ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի ընկերությունների դեպքում՝ նաև ցանցերի փոխկապակցման և տրաֆիկի փոխանակման, տեղական կամ միջազգային կապուղիների վարձակալության, միջազգային զանգերի վերջնավորման ծառայությունների գնում.
- գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.
- ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, տեխնոլոգիական ամբողջականությունը համալրող խմբաքանակներ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելի-ություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ.
- Հանրային կազմակերպությունների գնումների կարգերով սահմանված այլ դեպքերում, եթե դրանք չեն հակասում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին,

4) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված՝ հանրային կազմակերպությունների

գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների 7-րդ կետի պահանջները (ներկայումս գործող՝ Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 13-ի №273Ա որոշմամբ հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների 5-րդ և 20-րդ կետեր)՝ այն է, Գործարքը կնքել է առանց մրցույթի անցկացման՝ մեկ անձից գնման ընթացակարգով, առանց լրացուցիչ պահանջներով նախատեսված հիմքերի առկայության,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը ՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների 7-րդ կետի (ներկայումս գործող՝ Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 13-ի №273Ա որոշմամբ հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջների 5-րդ և 20-րդ կետեր) պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2022թ.